

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՈՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ, ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ,  
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ  
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Թիվ -----

ք. Երևան

..... 2005 թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (հետագայում՝ Կենտրոնական բանկ), գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ Ս. Սարգսյանի՝ մի կողմից, և \_\_\_\_\_ բանկը (հետագայում՝ Բանկ), գործելով համաձայն Բանկի կանոնադրության, ի դեմս \_\_\_\_\_ տնօրեն (վարչության նախագահ)՝ մյուս կողմից (հետագայում՝ Կողմեր), կնքեցին սույն գլխավոր համաձայնագիրը հետևյալի մասին.

### **1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, այլ իրավական ակտերի և սույն համաձայնագրի շրջանակներում ՀՀ ներքին արժույթային շուկայում կնքում են արտարժույթի առքի և վաճառքի գործարքներ, արժույթային սվոփ գործարքներ և իրականացնում են արտարժույթի կանխիկացման և ապականիկացման գործարքներ:

### **2. Ընդհանուր դրույթներ**

#### **2.1. Սույն համաձայնագրի իմաստով՝**

**Կենտրոնական բանկ**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

**Բանկ**՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ.

**Արտարժույթ**՝ Օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամներն ու մետաղադրամները, ինչպես նաև բանկային հաշիվներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով արտահայտված միջոցները:

**Արտարժույթի կանխիկացում**՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ Արտարժույթի դիմաց կանխիկ Արտարժույթի տրամադրումը Բանկին.

**Արտարժույթի ապականիկացում**՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից կանխիկ Արտարժույթի դիմաց անկանխիկ Արտարժույթի տրամադրումը Բանկին.

**Արժույթային սվոփ**՝ Բանկի կողմից ներկայացված Հայտի հիման վրա հաջորդական երկու գործարքների իրականացում. Բանկի և Կենտրոնական բանկի միջև ՀՀ դրամի և

անկանխիկ Արտարժույթի փոխանակում, որոշ ժամանակ անց նշված արժույթները միևնույն ծավալներով հետ փոխանակելու և դրամի կամ արտարժույթի դիմաց Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար վճարելու պայմանով.

**Սվոփ տոկոսադրույք`** Կենտրոնական բանկի կողմից Արժութային սվոփ Գործարքի վերաբերյալ հայտարարությունում նշված սվոփ տոկոսադրույք.

**Արտարժույթի տրամադրման սվոփ`** արժութային սվոփ, որի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական բանկին տրամադրում է անկանխիկ արտարժույթ և Կենտրոնական բանկից ներգրավում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում: Գործարքի երկրորդ քայլի ընթացքում տեղի է ունենում նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարի վճարում, որը Սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Բանկը Կենտրոնական բանկին, իսկ Սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում` Կենտրոնական բանկը Բանկին.

**Արտարժույթի ներգրավման սվոփ`** Արժութային սվոփ, որի առաջին քայլի ընթացքում Բանկը Կենտրոնական բանկից ներգրավում է անկանխիկ արտարժույթ և Կենտրոնական բանկին տրամադրում ՀՀ դրամ, իսկ երկրորդ քայլի ընթացքում նշված միջոցները միևնույն ծավալներով հետ են փոխանակվում: Գործարքի երկրորդ քայլի ընթացքում տեղի է ունենում նաև Սվոփ տոկոսադրույքին համապատասխան դրամային գումարի վճարում, որը Սվոփ տոկոսադրույքի դրական լինելու դեպքում վճարում է Կենտրոնական բանկը Բանկին, իսկ Սվոփ տոկոսադրույքի բացասական լինելու դեպքում` Բանկը Կենտրոնական բանկին:

**Հայտ`** Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Արտարժույթի առքի կամ վաճառքի, Արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփի, Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարք կնքելու առաջարկ (հավելվածներ 1,2,3,4,5,6).

**Հայտի հաստատում`** Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից հաստատելու մասին ծանուցում (հավելվածներ 7,8,9,10,11).

**Հայտի մասնակի հաստատում`** Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից Հայտում նշված գումարի մի մասի չափով հաստատելու մասին ծանուցում (հավելվածներ 7,8,9).

**Հայտի մերժում`** Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը Կենտրոնական բանկի կողմից մերժելու մասին ծանուցում (հավելվածներ 12,13,14).

**Գործարք`** Կենտրոնական բանկի և Բանկի միջև սույն համաձայնագրի շրջանակներում կնքված Արտարժույթի առքի կամ վաճառքի, Արտարժույթի տրամադրման կամ ներգրավման սվոփի, Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման գործարք.

**Գործարքի կնքման օր`** այն օրը, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկի կողմից ներկայացված Հայտը.

**Կատարման օր`** Գործարքի պայմաններով սահմանված ստանձնած պարտավորությունների իրականացման, այսինքն` անկանխիկ ֆինանսական միջոցները գործընկերոջ հաշվին մուտքագրելու, կամ կանխիկ միջոցները Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրելու կամ Կենտրոնական բանկի դրամարկղից տրամադրելու օր.

**Գործարքի ծավալ`** Գործարքի հիմքում ընկած Արտարժույթի միավորների թիվը.

**Գործարքի դրամային համարժեք`** Գործարքի ծավալի և Գործարքի փոխարժեքի արտադրյալ:

**Աշխատանքային օր`** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնի կամ հիշատակի ոչ աշխատանքային օր, ինչպես նաև շաբաթ կամ կիրակի չհանդիսացող ցանկացած օրացուցային օր:

**Բանկային օր`** Կենտրոնական բանկի աշխատանքային օրվա ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը.

### **3. Արտարժույթի առք ու վաճառքի գործարքների և հաշվարկների իրականացման կարգը**

- 3.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Կենտրոնական բանկին առաջարկում է Գործարքի պայմանները` Հայտի միջոցով:
- 3.2. Բանկը Գործարքի կնքման Հայտը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական բանկի հայտարարության մեջ նշված ժամկետում:
- 3.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:
- 3.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել, մասնակի հաստատել կամ մերժել Հայտերի ընդունման համար սահմանված ժամկետից հետո 2 ժամվա ընթացքում:
- 3.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը կամ բավարարել մասնակիորեն (Հայտի մասնակի հաստատում): Հայտարարության մեջ նշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:
- 3.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:
- 3.7. Առանձին դեպքերում Արտարժույթի առքի կամ վաճառքի Գործարքը կարող է կնքվել Կողմերի միջև ուղղակի բանակցությունների արդյունքում: Այս դեպքում բանակցությունների միջոցով սահմանվում են Գործարքի պայմանները, այնուհետև Բանկը համապատասխան առքի կամ վաճառքի Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկ: Բանակցությունների արդյունքում սահմանված Գործարքի պայմանները նշվում են Հայտի մեջ:
- 3.8. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:
- 3.9. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:
- 3.10. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու (մասնակի հաստատելու) մասին համապատասխան գրառում:
- 3.11. Կենտրոնական բանկի կողմից անկանխիկ Արտարժույթի առքի դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին, իսկ կանխիկ Արտարժույթի առքի դեպքում` մինչև Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը` Կենտրոնական բանկի դրամարկղ: Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրն, ընդ որում կանխիկ Արտարժույթի առքի դեպքում` Բանկի կողմից կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրելուց հետո` Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը մուտքագրել:

Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

3.12. Կենտրոնական բանկի կողմից Արտարժույթի վաճառքի դեպքում Կենտրոնական բանկը Գործարքի Կատարման օրը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը: Անկանխիկ Արտարժույթի վաճառքի դեպքում, Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին, իսկ կանխիկ Արտարժույթի վաճառքի դեպքում՝ մինչև Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը Գործարքի ծավալի չափով Արտարժույթը տրամադրել Բանկին Կենտրոնական բանկի դրամարկղից, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

#### **4. Արժութային սվոփ գործարքների և հաշվարկների իրականացման կարգը**

- 4.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Կենտրոնական բանկին առաջարկում է Գործարքի պայմանները՝ Հայտի միջոցով:
- 4.2. Բանկը Գործարքի կնքման Հայտը Կենտրոնական բանկ է ներկայացնում Կենտրոնական բանկի հայտարարության մեջ նշված ժամկետում:
- 4.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:
- 4.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել, մասնակի հաստատել կամ մերժել Հայտերի ընդունման համար սահմանված ժամկետից հետո 2 ժամվա ընթացքում:
- 4.5. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում միակողմանիորեն մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը կամ բավարարել մասնակիորեն (Հայտի մասնակի հաստատում): Հայտարարության մեջ նշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:
- 4.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:
- 4.7. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և Կողմերը ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:
- 4.8. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:
- 4.9. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու (մասնակի հաստատելու) մասին համապատասխան գրառում:

4.10. Արտարժույթի տրամադրման սվոփի իրականացման դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի առաջին քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին, իսկ Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը Գործարքի առաջին քայլի Կատարման օրը մուտքագրել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Կենտրոնական բանկը Գործարքի երկրորդ քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովում է Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին և Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը:

Սվոփ տոկոսադրույթի դրական լինելու դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է նաև Սվոփ տոկոսադրույթին համապատասխան գումարը, իսկ Սվոփ տոկոսադրույթի բացասական լինելու դեպքում՝ Կենտրոնական բանկը Սվոփ տոկոսադրույթին համապատասխան գումարը մուտքագրում է Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին:

Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ կարող են սահմանվել այլ պայմաններ, կամ կողմերը բանակցությունների արդյունքում կարող են պայմանավորվել այլ պայմանների վերաբերյալ: Բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

4.11. Արտարժույթի ներգրավման սվոփի իրականացման դեպքում Կենտրոնական բանկը Գործարքի առաջին քայլի Կատարման օրվա դրությամբ ապահովում է Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին և Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը, եթե Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ այլ պայմաններ սահմանված չեն, կամ կողմերը բանակցությունների արդյունքում այլ պայմանների վերաբերյալ չեն պայմանավորվել: Գործարքի երկրորդ քայլի Կատարման օրվա դրությամբ Բանկը պարտավոր է ապահովել Գործարքի ծավալի չափով Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին, իսկ Կենտրոնական բանկը պարտավոր է Գործարքի դրամային համարժեքի չափով դրամը մուտքագրել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին:

Սվոփ տոկոսադրույթի դրական լինելու դեպքում Կենտրոնական բանկը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին մուտքագրում է նաև Սվոփ տոկոսադրույթին համապատասխան գումարը, իսկ Սվոփ տոկոսադրույթի բացասական լինելու դեպքում Կենտրոնական բանկն անվիճելի (անակցեպտ) կարգով գանձում է Սվոփ տոկոսադրույթին համապատասխան գումարը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից:

Կենտրոնական բանկի կողմից տրված հայտարարության մեջ կարող են սահմանվել այլ պայմաններ, կամ կողմերը բանակցությունների արդյունքում կարող են պայմանավորվել այլ պայմանների վերաբերյալ: Բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

## 5. Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործարքների և հաշվարկների իրականացման կարգը

- 5.1. Բանկը Կենտրոնական բանկի հետ Գործարք կնքելու համար բանակցություններ է վարում Գործարքի պայմանների վերաբերյալ, այդ թվում՝ միջնորդավճարի:
- 5.2. Բանկը Գործարքի պայմանների վերաբերյալ Կենտրոնական բանկի հետ համաձայնության գալու դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացնում Գործարքի կնքման Հայտը:
- 5.3. Հայտերը կարող են ներկայացվել թղթային եղանակով (երկու օրինակից) կամ CBANet համակարգչային ցանցի միջոցով:
- 5.4. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված Հայտը պարտավոր է հաստատել կամ մերժել Հայտի ընդունման պահից 30 րոպեի ընթացքում:
- 5.5. Կենտրոնական բանկին իրավունք չի վերապահվում մերժել Բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված Հայտը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայտը սահմանված ձևով չի ներկայացվել կամ ներկայացվել է սխալներով և (կամ) ջնջումներով, կամ մինչև Հայտի առաքումը տվյալ Բանկի հետ սույն հոդվածի 5.1 կետով նախատեսված բանակցություններ չեն վարվել: Բանակցությունների ընթացքում որոշված ժամկետից ուշ կամ սահմանված ձևից շեղումներով ներկայացված Հայտերը մերժվում են:
- 5.6. Բանկի կողմից Կենտրոնական բանկին առաքված Հայտը չի կարող հետ կանչվել:
- 5.7. Եթե Բանկը Կենտրոնական բանկից ստանում է Հայտի հաստատումը, ապա Գործարքը համարվում է կնքված, և կողմերն ստանձնում են սույն համաձայնագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրում են նախատեսված պատասխանատվությունը:
- 5.8. Կենտրոնական բանկի կողմից Բանկի Հայտը հաստատելու (մասնակի հաստատելու), մերժելու, ինչպես նաև Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկը նույն օրվա ընթացքում համապատասխան կարգով ծանուցում է Բանկին:
- 5.9. Թղթային ձևով ներկայացված Հայտերի վրա կատարվում է Հայտը մերժելու կամ հաստատելու մասին համապատասխան գրառում:
- 5.10. Արտարժույթի կանխիկացման Գործարք կնքելու դեպքում Բանկը պարտավոր է Գործարքի Կատարման օրվա դրությամբ ապահովել Գործարքի ծավալի չափով անկանխիկ Արտարժույթի մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին: Կենտրոնական բանկն անկանխիկ Արտարժույթն իր հաշվին մուտքագրվելու համապատասխան հաստատումն ստանալուց հետո պարտավոր է մինչև հաջորդ Բանկային օրվա ավարտը Կենտրոնական բանկի դրամարկղից Բանկին տրամադրել Գործարքի ծավալի չափով կանխիկ Արտարժույթը:
- 5.11. Արտարժույթի ապականխիկացման Գործարք կնքելու դեպքում Բանկը պարտավոր է մինչև Գործարքի Կատարման օրվա Բանկային օրվա ավարտը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրել Գործարքի ծավալի չափով կանխիկ Արտարժույթը: Կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ մուտքագրվելուց հետո Կենտրոնական բանկը պարտավոր է նույն օրվա ընթացքում Գործարքի ծավալի չափով անկանխիկ Արտարժույթը փոխանցել Բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին:
- 5.12. Արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման Գործարքի դիմաց Կենտրոնական բանկը Գործարքի Կատարման օրը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպո) կարգով գանձում է կամ Բանկի թղթակցային հաշվին մուտքագրում է միջնորդավճար՝ բանակցությունների արդյունքում պայմանավորված

չափով, ընդ որում, միջնորդավճարը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կնքման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով:

5.13. Առանձին դեպքերում կողմերը բանակցությունների արդյունքում կարող են պայմանավորվել հաշվարկների իրականացման այլ պայմանների վերաբերյալ: Ընդ որում, բանակցությունների արդյունքում այլ պայմանների սահմանման դեպքում վերջիններս նշվում են Հայտի մեջ:

## **6. Կողմերի պարտավորությունները**

6.1. Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կնքվող Գործարքների գաղտնիությունը:

6.2. Կողմերը պարտավորվում են սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում և պայմաններով կատարել համապատասխան փոխանցումները:

## **7. Կողմերի պատասխանատվությունը**

### **7.1 Բանկի պատասխանատվությունը.**

7.1.1. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես արտարժույթի Գնորդ, սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում Գործարքի դրամային համարժեքի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում, վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.2. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես անկանխիկ Արտարժույթ Վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժույթային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժույթային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր (բացառությամբ սույն ենթակետի երկրորդ մասով նախատեսված դեպքերի), որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում, և Կենտրոնական բանկը հետ է գանձում Բանկի թղթակցային հաշվին մուտքագրված դրամական գումարը:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա դրամական միջոցների բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք՝ յուրաքանչյուր օրացուցային օրվա համար բացակայող միջոցների 0.5%-ի չափով՝ մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.3. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես կանխիկ Արտարժույթ Վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.4. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի տրամադրման սվոփ կամ Արտարժույթի ներգրավման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի տրամադրման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն կետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի համապատասխան քայլի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր (բացառությամբ սույն ենթակետի երկրորդ մասով նախատեսված դեպքերի), որից հետո Բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում (ընդ որում Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով), և Կենտրոնական բանկը հետ է գանձում ի կատարումն Գործարքի համապատասխան քայլի Բանկի թղթակցային հաշվին մուտքագրված դրամային գումարը:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք՝ բացակայող միջոցների 0.5%-ի չափով՝ մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.5. Այն դեպքում, երբ Բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի ներգրավման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում Գործարքի դրամային համարժեքի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում, ինչպես նաև Արտարժույթի տրամադրման կամ Արտարժույթի ներգրավման սվոփ գործարքների երկրորդ քայլի Կատարման օրվա դրությամբ Բանկի կողմից վճարման ենթակա Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների բացակայության դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ Հայտում նշված Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով և վճարվելիք Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը, իսկ Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում Գործարքի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով:

Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված հիմքով Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած ճանաչվելու օրը Բանկի թղթակցային հաշվում գանձման ենթակա գումարի բացակայության կամ մասնակի առկայության դեպքում Կենտրոնական բանկը Բանկի

թղթակցային հաշվից գանձում է համապատասխան դրամական միջոցները դրանց առկայության առաջին իսկ պահին, առկա գումարի չափով՝ մինչև գանձման ենթակա գումարի ամբողջական մարումը: Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից գանձում է նաև տուժանք՝ բացակայող միջոցների 0.5%-ի չափով՝ մինչև բացակայող միջոցների ամբողջական գանձման օրը (ներառյալ):

7.1.6. Արտարժույթի կանխիկացման Գործարքի իրականացման ժամանակ Բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Կենտրոնական բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.7. Արտարժույթի ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ, Բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Կենտրոնական բանկի դրամարկղ չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.1.8. Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ իր թղթակցային հաշվում վճարման ենթակա միջնորդավճարին համապատասխան դրամական միջոցներ չունենալու դեպքում Բանկը վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

## **7.2. Կենտրոնական բանկի պատասխանատվությունը.**

7.2.1. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի Գնորդ, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում Բանկի թղթակցային հաշվին Գործարքի դրամային համարժեքի չափով դրամի մուտքագրումը չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.2. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես անկանխիկ Արտարժույթ Վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր, որից հետո Կենտրոնական բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում Կենտրոնական բանկը հետ է վճարում Բանկի թղթակցային հաշվից գանձված դրամական գումարը:

- 7.2.3. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես կանխիկ Արտարժույթ Վաճառող, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Բանկին չտրամադրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:
- 7.2.4. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի ներգրավման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային գումարների մուտքագրումը Բանկի կողմից նշված արտարժութային հաշվին չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով: Սույն ենթակետով նախատեսված տուժանքները հաշվարկվում են Գործարքի համապատասխան քայլի Կատարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից հաշված առավելագույնը երեք Աշխատանքային օր, որից հետո, Կենտրոնական բանկի կողմից պարտավորությունը չկատարելու պարագայում, Հայտը և Հայտի հաստատումն ուժը կորցրած են ճանաչվում (ընդ որում Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով), և Կենտրոնական բանկը հետ է վճարում ի կատարումն Գործարքի համապատասխան քայլի Բանկի թղթակցային հաշվից գանձված դրամային գումարը:
- 7.2.5. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը հանդես է գալիս որպես Արտարժույթի ներգրավման սվոփ կամ Արտարժույթի տրամադրման սվոփ Գործարքի կողմ, Արտարժույթի տրամադրման սվոփի առաջին քայլի կամ Արտարժույթի ներգրավման սվոփի երկրորդ քայլի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում Բանկի թղթակցային հաշվին Գործարքի դրամային համարժեքի, ինչպես նաև Արտարժույթի ներգրավման կամ Արտարժույթի տրամադրման սվոփ գործարքների երկրորդ քայլի իրականացման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից վճարման ենթակա Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարի մուտքագրումը չապահովելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի դրամային համարժեքի 0.5%-ի չափով, ինչպես նաև վճարման ենթակա Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումարը, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում, ընդ որում Արտարժույթի ներգրավման և Արտարժույթի տրամադրման սվոփի երկրորդ քայլի իրականացման դեպքում Հայտն ուժը կորցրած է ճանաչվում միայն երկրորդ քայլի մասով:
- 7.2.6. Արտարժույթի կանխիկացման Գործարքի իրականացման ժամանակ, Կենտրոնական բանկը սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում կանխիկ Արտարժույթը Բանկին չտրամադրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:
- 7.2.7. Արտարժույթի ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ, Կենտրոնական բանկը, սույն համաձայնագրով սահմանված ժամկետներում արտարժութային փոխանցումները չկատարելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը

հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.8. Արտարժույթի կանխիկացման կամ ապականխիկացման Գործարքի իրականացման ժամանակ սույն համաձայնագրով սահմանված օրվա դրությամբ վճարման ենթակա միջնորդավճարին համապատասխան դրամական միջոցները Կենտրոնական բանկում Բանկի թղթակցային հաշվին չմուտքագրելու կամ անպատշաճ կերպով կատարելու դեպքում Կենտրոնական բանկը վճարում է տուժանք՝ Գործարքի ծավալի 0.5%-ի չափով, ընդ որում, տուժանքը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ Կենտրոնական բանկի կողմից Գործարքի կատարման օրվա դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքով, իսկ Հայտը և Հայտի հաստատումը ուժը կորցրած են ճանաչվում:

7.2.9. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպտ) կարգով գանձել սույն հոդվածով նախատեսված տուժանքի գումարները:

7.3. Կողմերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն համաձայնագրով նախատեսված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց տրամադրելու համար, բացառությամբ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

## **8. Վեճերի լուծման կարգը**

8.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսուցորյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման 3 Աշխատանքային օրվա ընթացքում:

8.2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում, դրանք լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

## **9. Համաձայնագրի գործողության ժամկետը**

9.1. Սույն համաձայնագիրը կնքվում է անժամկետ: Դրա գործողությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից:

9.2. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ, կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվել:

9.3. Սույն համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի գրավոր դիմումի հիման վրա, որը պետք է ներկայացվի համաձայնագրի դադարեցման օրվանից մեկ ամիս առաջ:

9.4. Կողմերը պարտավորվում են եռօրյա ժամկետում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել իրավաբանական, փոստային կամ էլեկտրոնային հասցեների, տելեքսի, հեռատիպի, հեռախոսի, ֆաքսի, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

## 10. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

10.1. Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի և որպես ֆորս-մաժոր համարվող պայմանների ազդեցության:

## 11. Այլ դրույթներ

11.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերի միջև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2003 թվականի հուլիսի 14-ի թիվ 1/250L որոշումով հաստատված ձևով կնքված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի, արժույթային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման գլխավոր համաձայնագիրը» համարվում է լուծված:

11.2. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 օրինակից (յուրաքանչյուր Կողմին՝ մեկական օրինակ): Երկու օրինակներն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ:

## 12. Կողմերի իրավաբանական հասցեները

Կենտրոնական բանկ	Կ.Տ.	Բանկ
Հայաստանի Հանրապետություն		Հայաստանի Հանրապետություն
375010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6		_____
		_____
Հեռախոս՝ _____		Հեռախոս՝ _____
Տելեքս՝ _____		Տելեքս՝ _____
Ֆաքս՝ _____		Ֆաքս՝ _____
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝		Բանկի տնօրեն
S.Սարգսյան		(վարչության նախագահ)՝

U.S.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆՄԱՆ

### ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -  
----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և  
ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկին վաճառել ----- հետևյալ պայմաններով.  
արտարժույթի տեսակը

Գնորդի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ և վճարման ձև	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և ----- բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----

-----

Կ.Տ

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՎԱՃԱՌՔԻ

### ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -  
--- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և  
ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկից գնել ----- հետևյալ պայմաններով.  
արտարժույթի տեսակը

Վաճառողի դրամային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ և վճարման ձև	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----  
-----

Կ.Տ

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍՎՈՓ  
ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -  
----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և  
ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկից ներգրավել ----- հետևյալ պայմաններով.  
արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր (1-ին քայլ)	
Կատարման օր (2-րդ քայլ)	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Սվոփ տոկոսադրույթ	
Սվոփ տոկոսադրույթին համապատասխան գումար	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----  
-----

Կ.Տ

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ

### ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -  
----- 2003 թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման  
և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկին տրամադրել ----- հետևյալ պայմաններով.  
արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր (1-ին քայլ)	
Կատարման օր (2-րդ քայլ)	
Գործարքի ծավալ	
Փոխարժեք	
Գործարքի դրամային համարժեք	
Սվոփ տոկոսադրյուք	
Սվոփ տոկոսադրյուքի համապատասխան գումար	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և ----- բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----  
-----

Կ.Տ

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ

### ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -----  
----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և  
ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկին տրամադրել կանխիկ -----  
----- անկանխիկի դիմաց՝ հետևյալ պայմաններով. արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Միջնորդավճար	
Միջնորդավճար վճարող կողմ	
Միջնորդավճարի գումար (ՀՀ դրամով)	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման  
թիվ «-----» գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ

### ՀԱՅՏ N -----

Ներկայացվում է համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև -----  
----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և  
ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր համաձայնագրի:

Առաջարկում ենք «-----» բանկին տրամադրել անկանխիկ -----  
----- կանխիկի դիմաց՝ հետևյալ պայմաններով. արտարժույթի տեսակը

Բանկի դրամային հաշվի համար	
Բանկի արտարժութային հաշվի համար	
Արտարժույթի տեսակ	
Կատարման օր	
Գործարքի ծավալ	
Միջնորդավճար	
Միջնորդավճար վճարող կողմ	
Միջնորդավճարի գումար (ՀՀ դրամով)	
Այլ նշումներ	

«-----» բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման  
թիվ «-----» գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

-----  
-----

Կ.Տ

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆՍԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է ----- բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և -----  
----- բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի,  
կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր  
համաձայնագրի:

Ձեր կողմից ----- թ. ժամը ----- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ----  
հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված ----- Գործարքի ծավալի չափով):

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և ----- բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է ----- բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և -----  
----- բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի,  
կանխիկացման և ապականիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր  
համաձայնագրի:

Ձեր կողմից ----- թ. ժամը ----- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ----  
հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված ----- Գործարքի ծավալի չափով):

Վաճառված արտարժույթը փոխանցել-----:

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և ----- բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ/ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ (ՄԱՍՆԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ)

Առաքվում է ----- բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և -----  
----- բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի,  
կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր  
համաձայնագրի:

Ձեր կողմից ----- թ. ժամը ----- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ----  
հայտը համարել հաստատված (մասնակի հաստատված ----- Գործարքի ծավալի չափով):

Արտարժույթը փոխանցել-----:

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝  
համաձայն Կենտրոնական բանկի և ----- բանկի միջև ---- ----- թ. կնքված  
արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման  
գործառնությունների կնքման թիվ ----- գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաքվում է «-----» բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և «---  
-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի,  
կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր  
համաձայնագրի:

Ձեր կողմից ---- ----- թ. ժամը ---- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ----  
հայտը համարել ակցեպտավորված:

Արտարժույթը փոխանցել-----:

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն  
Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի  
առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների  
կնքման թիվ «-----» գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաքվում է «-----» բանկին՝ համաձայն Կենտրոնական բանկի և «---  
-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի,  
կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր  
համաձայնագրի:

Ձեր կողմից ---- ----- թ. ժամը ---- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ---- հայտը  
համարել ակցեպտավորված:

Կենտրոնական բանկը ձեռք է բերում իրավունքներ և կրում պարտավորություններ՝ համաձայն  
Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի  
առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների  
կնքման թիվ «-----» գլխավոր համաձայնագրի համապատասխան դրույթների:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔԻ / ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅՏԻ ՍԵՐԺՈՒՄ

Առաքվում է «-----» բանկին

Կենտրոնական բանկը, համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր համաձայնագրի 3.4, և 3.5 կետերի՝ մերժում է արտարժույթի առքի / վաճառքի գործարք կնքելու համար ----- ----- թ. ժամը ----- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N ----- հայտը:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ/ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Առաքվում է «-----» բանկին

Կենտրոնական բանկը, համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի  
միջև ---- ----- թ. կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ,  
կանխիկացման և ապականիխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր  
համաձայնագրի 4.4, և 4.5 կետերի՝ մերժում է արտարժույթի տրամադրման/ներգրավման գործարք  
կնքելու համար ----- ----- թ. ժամը ----- -ին Կենտրոնական բանկ ներկայացված N  
-----հայտը:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.

## ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ / ԱՊԱԿԱՆԽԻԿԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄ

Առաքվում է «-----» բանկին

Կենտրոնական բանկը, համաձայն Կենտրոնական բանկի և «-----» բանկի միջև ---- -ի կնքված արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփի, կանխիկացման և ապականիխիկացման գործառնությունների կնքման թիվ «-----» գլխավոր համաձայնագրի 5.4, և 5.5 կետերի՝ մերժում է արտարժույթի կանխիկացման և ապականիխիկացման գործարք կնքելու համար ----- -ի Կենտրոնական բանկ ներկայացված N -----հայտը:

Կենտրոնական բանկ

-----

Կ.Տ

----- 200 թ.